ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

24.07.2013թ.
205-ի 4

ՀՀ Արագածոտնի մարզպետ
պարոն Սարգիս Սահակյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սահակյան,

Մեզ է դիմել ՀՀ քաղաքացի Նինա Ստեփանյանը եւ խնդրել է իրեն օգնել տեղեկատվություն ստանալու հարցում: Նա ունի այգետնակ Տեղեր համայքում՝ Զորափ 2 սպառողական կոոպերատիվում, որն ապահովված չէ խմելու ջրով եւ կոյուղիով: Նինա Ստեփանյանը հայտնեց, որ ջրից զրկված է շուրջ 900 տնտեսություն: Քաղաքացին համայնքի ջրամատակարարման հարցը լուծելու խնդրանքով դիմել է “Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ-ին եւ ստացել է պատասխան, ըստ որի՝ ՓԲԸ-ն չի սպասարկում Արագածոտնի մարզի Տեղեր համայքը:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրե հետեւյալ տեղեկությունները.

1. Նախատեսվու՞մ է արդյոք 2013-2014թ.թ.-ին Արագածոտնի մարզի Տեղեր համայքի Զորաբ 2 սպառողական կոոպերատիվը ապահովել խմելու ջրով եւ ջրահեռացմամբ,
2. Եթե ոչ, ապա ինչու՞,
3. Նախատեսվու՞մ է արդյոք առհասարակ Արագածոտնի մարզի Տեղեր համայքի Զորաբ 2 սպառողական կոոպերատիվը ապահովել խմելու ջրով եւ ջրահեռացմամբ եւ ե՞րբ է նախատեսվում,
4. Ո՞ր ջրամատակարարման ընկերությունն է սպասարկում Տեղեր համայքը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան